**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ը**
**ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ /Ք. ՖՈՒՃՈՌՒ/**
**ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Ստելլա Սիմոնյան – Քարտուղարության փաստաթղթաշրջանառության բաժնի գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն /ք. Ֆուճոու/, 2024 թ. սեպտեմբերի 11-27-ը

**Հրավիրող կողմը.**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Չինաստանի Կառավարություն

3. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն «Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների համար տարածաշրջանային տնտեսական զարգացում» խորագրով դասընթացին

4. **Քննարկված թեմաները.**

Գործուղման ընթացքում Ֆուծիան նահանգի արտաքին տնտեսական համագործակցության կենտրոնի դասախոսները ներկայացրեցին Չինաստանի զարգացման ընդհանուր իրավիճակը և հայեցակարգը, ծանոթացրեցին Չինաստանի տարածաշրջանային տնտեսական զարգացման ներկա վիճակին և տարածաշրջանային տնտեսության առողջ զարգացմանը նպաստելու Չինաստանի օգտակար փորձին:

5. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացին ունկնդրել ենք դասախոսություններ հետևյալ թեմաներով.

«Ծանոթություն Չինաստանի հետ»- ՉԺՀ-ի հիմնադրումից ի վեր վերջին 70 տարիների ընթացքում Չինաստանի զարգացումը քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում:

«Մեկ գոտի և մեկ ճանապարհ» նախաձեռնություն և միջազգային համագործակցություն.

«Առաջին կարգի բիզնես միջավայրի ստեղծում»- ազգային զարգացման համար բիզնես միջավայրի կարևորության մասին՝ հիմնական հասկացությունների, կոնկրետ մեթոդների և դրա առավելությունների առումով:

«Չինաստանի տնտեսական իրավիճակի և հարկաբյուջետային և ֆինանսական քաղաքականության վերլուծություն»-Չինաստանի տնտեսական զարգացման իրավիճակի և նրա հիմնական հարկաբյուջետային և ֆինանսական քաղաքականության մասին

«Չինաստանի տեղական տնտեսական և սոցիալական զարգացման ծրագիր»- Չինաստանի ազգային տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրի հիմնական հայեցակարգերի, դրա մշակման և իրականացման գործընթացների մասին

«Պիլոտային ազատ առևտրի գոտու կառուցման ռազմավարական որոշման ըմբռնումը»- ազատ առևտրի գոտու ընդհանուր հայեցակարգի և առանձնահատկությունների և տարբեր տարածաշրջաններում ազատ առևտրի գոտու զարգացման մոդելի մասին

«Քաղաքաշինական գործընթաց՝ հիմնված Ցզինցզյան մոդելի վրա»

«Տնտեսական զարգացման գոտիների կառուցման մեջ ներդրումների տեսություն և պրակտիկա»

«Գլոբալ ներդրումների կառավարման փոփոխությունը և Չինաստանի ազատ առևտրի գոտու արձագանքման ռազմավարությունը»-գլոբալ ներդրումների կառավարման փոփոխության միտումների և բնութագրերի վերլուծության, գլոբալ ներդրումների կառավարման փոփոխությանը ակտիվորեն մասնակցելու Չինաստանի շահերի և պարտականությունների և Չինաստանի ազատ առևտրի վերլուծության մասին

6. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

«Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների համար տարածաշրջանային տնտեսական զարգացում» խորագրով դասընթացի ավարտին մասնակիցներին հանձնվեցին հավաստագրեր:

7. Ստորագրություն, ամսաթիվ:

Ստելլա Սիմոնյան

02 հոկտեմբերի 2024թ.